ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՍՈՑԻԱԼ—ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 70 ԱՄՅԱԿԻ ՇԵՄԻՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։ 1920 թ. Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ հայ ժողովուրդը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից, այլև իրական պայմաններ ստեղծվեցին նրա հետագա բարգավաճման, տնտեսական, սոցիալական, մշակութային առաջընթացի համար։

Սովետական Հայաստանը ժառանգեց խղճուկ մի տնտեսություն և ընդամենը 720 հազար ազգաբնակչություն։ Նշենք, որ 1913 թ. նրա այսօրվա տարածքում բնակվում էր ավելի քան 1 մլն մարդ։ Իսկ եթե դրան ավելացնենք Արևմտյան Հայաստանից և այլ վայրերից Արևելյան Հայաստան ներգաղթած բնակչությունը, որ ողողել էր ոչ միայն Արևելյան Հայաստանը, այլև ամբողջ Կովկասն ու Ղրիմը, ապա իրավիճակն ավելի պարզ կդառնա։ Սովետական իշխանությունը մեծագույն հոգատարությամբ շրջապատեց թուրքական յաթաղանից փրկված և Հայաստանում ապաստանած տասնյակ հազարավոր գաղթականներին, շուտափույթ միջոցներ ձեռնարկեց նրանց օթևանով, հողով, աշխատանքով և ապրուստի միջոցներով ապահովելու համար։ Գրեթե մեկ տասնամյակ պահանջվեց անցյալից ժառանգած ագրարային գերբնակչությունն ու գործազրկությունը վերացնելու և բնակչության արդյունավետ զբաղվածության հիմքերը դնելու համար։

Հասկանալի է, որ հանրապետության բնակչության ավելացման հիմնական աղբյուրը եղել է նրա բնական աճը, բայց առանձին փուլերում, մասնավորապես սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, 1930-ական թվականների կեսերին և հետպատերազմյան մի քանի տարիներին, էական նշանակություն է ունեցել նաև ինչպես արտասահմանից, այնպես էլ երկրի այլ հանրապետություններից կատարվող ներգաղթը։ Այդ երկու գործոնների շնորհիվ Հայկական ՍՍՀ ազգաբնակչությունը կարճ ժամանակամիջոցում բավականին աճեց և արդեն 1930 թ. կեսին կազմեց մեկ միլիոն, այսինքն հասավ 1913 թ. մակարդակին։ 1921-1939 թթ., շուրջ երկու տասնամյակում, ՀՍՍՀ բնակչությունն ավելացավ 73%-ով։ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 70 ամյակի շեմին այն կազմեց արդեն 3,45 մլն մարդ։ Դա թերևս մեծ թիվ չէ, բայց երբ խոսքը Հայաստանի մասին է, այն բոլորովին այլ իմաստ է ստանում։ Վեցկկես տասնամյակի ընթացքում բնակչության մոտ հնգապատկումը հազվադեպ երևույթ է։ Այսօր տնտեսապես զարգացած երկրներում բնակչությունն ավելանում է չնչին չափերով, իսկ Եվրոպայի մի քանի երկրներում՝ նույնիսկ նվազում է։

Սովետական Հայաստանը ժառանգել էր ծայրահեղ քայքայված էկոնոմիկա։ «Ժողովրդական տնտեսության կատարյալ անկում։ Արդյունաբերության բացարձակ կործանում։ Գյուղատնտեսության կրճատում մինչև նախապատերազմյան չափի մեկ քառորդը։ Բազմաթիվ պատերազմներից ու ազգամիջյան ջարդերից ամայացած ու ավերակների վերածված գյուղերի կույտեր», —ահա այսպես էր բնութագրում «Խորհրդային Հայաստան» օրաթերթն այն պահը, երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր։

Հայաստանը մինչև առաջին համաշխարհային պատերազմն էլ աչքի չէր ընկնում էկոնոմիկայի զարգացման բարձր մակարդակով։ Ինչպես ցարական

Ռուսաստանի մյուս ծայրամասերը, այնպես էլ Հայաստանը դարձել էին նրա գաղութային, հանքահումքային կցորդը։

Սովետական կարգերի հաղթանակով Հայաստանը հիրավի հառնեց մոխրակույտերից և պատմական մեծ վերընթաց ապրեց։ Կարճատև պատմական ժամանակամիջոցում Սովետական Հայաստանը ագրարային երկրից վերածվեց ինդուստրիալ հանրապետության։ Ռուս ժողովրդի և մեր հայրենիքի մյուս ժողովուրդների եղբայրական համագործակցության շնորհիվ հանրապետությունում ստեղծվեց ժամանակակից գիտատեխնիկական նվաճումների պահանջներին համապատասխանող բազմաճյուղ և զարգացած արդյունաբերություն։ Արմատապես վերափոխվեց ու զարգացավ գյուղատնտեսությունը, աննախընթաց վերելք ապրեց շինարարությունը, ստեղծվեցին տրանսպորտի և կապի նորանոր հանգույցներ, կառուցվեցին տուֆակերտ քաղաքներ, շենացան գյուղերը։ Սաղմնավորվեց և աննախընթաց վերելք ապրեց գիտությունը, բուռն զարգացում ունեցավ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթը։

ՀՍՍՀ-ում գիտատեխնիկական առաջընթացի համեմատ արդյունաբերության ընդգրկման շրջանակներն աստիճանաբար ընդարձակվեցին։ Բավական է ասել, որ 1985 թ. նրա համախառն արտադրանքը, 1913 թ. համեմատությամբ, ավելացավ 521, իսկ 1940 թ. համեմատությամբ՝ ավելի քան 60 անգամ։

Օգտագործելով եղած հանքային պաշարները և ելնելով աշխատանքային ռեսուրսների, մասնավորապես ինժեներական ու բանվորական բարձրորակ կադրերի առկայությունից, ՀՍՍՀ արդյունաբերությունը ժամանակի ընթացքում մասնագիտացավ գունավոր մետաղաձուլության, մեքենաշինության, հատկապես դրա բազմաթիվ նորագույն արտադրությունների, շինանյութերի ու քիմիական արդյունաբերության մի շարք նոր և նորագույն ճյուղերի, ինչպես նաև թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքի նոր տեսակների արտադրության բնագավառում։

Հայաստանի արդյունաբերության զարգացման տարեգրության մեջ խորապես ուրվագծվում է հետպատերազմյան շրջանը։ Նրա համակողմանի զարգացումն ուղեկցվում է ճյուղային կառուցվածքի առաջադիմական տեղաշարժերով, ճյուղային և տարածքային տեղաբաշխման միակողմանիության նկատելի հաղթահարմամբ, արդյունաբերական ձեռնարկությունների մասնագիտացմամբ, որակական ցուցանիշների և աշխատուժի օգտագործման բարելավմամբ։ Առանձնապես արագ տեմպերով աճեցին մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և էներգետիկան, ինչպես նաև շինանյութերի արդյունաբերությունը։ Այդ զարգացումը բնութագրվում է վերոհիշյալ ճյուղերի ոչ միայն քանակական, այլև որակական աճով, միագամայն նոր արտադրությունների ստեղծմամբ։

Այդ ճյուղերը, ինչպես նաև հանրապետության ողջ արդյունաբերությունը, իրենց զարգացման արագ տեմպերով, ինչպես ամբողջ հետպատերազմյան տարիներին, այնպես էլ ներկայումս և մինչև 1990 թ. գերազանցել են և կգերազանցեն միութենական աճի միջին ցուցանիշները։ Եթե ՍՍՀՄ արդյունաբերության զարգացման միջին տարեկան տեմպերը 1951—1960 թթ. կազմել են 11,7, 1960—1970 թթ.՝ 8,55, իսկ 1971—1985 թթ.՝ 5,2%, ապա ՀՍՍՀ արդյունաբերության մեջ դրանք համապատասխանաբար կազմել են 12,4, 10,5 և 7,2%։ Բավական է ասել, որ 1940-1985 թթ. ՀՍՍՀ արդյունաբերությունն իր աճի տեմպերով Միության միջին ցուցանիշը գերազանցել է 2,4 անգամ։ Եթե 1971-1985 թթ. Միության մեքենաշինության ու մետաղամշակման արդյունաբերության միջին տարեկան աճի տեմպերը կազմել են 8,6, ապա ՀՍՍՀ-ում 11,8 %։ Այս միտումը բնորոշ է նաև արդյունաբերության այլ ճյուղերին։ Ներկայումս հանրապետության արդյունաբերության մեջ ստեղծվել է այնպիսի ճյուղային կառուցվածք, որը հատուկ է արդյունաբերական առումով զարգացած երկրներին։

Հանրապետության արդյունաբերական արտադրանքի շատ տեսակներ հայտնի են Սովետական Միությունում և նրա սահմաններից դուրս։ Դրանցից շուրջ 200-ը առաքվում են աշխարհի ավելի քան 80 երկրներ։

ՀՍՍՀ արդյունաբերության այդպիսի զարգացումն ապահովել է զբաղվածության արագ աճ։ 1940 թ. համեմատությամբ արդյունաբերության արտադրական անձնակազմը 1960 թ. ավելի քան եռապատկվել է, իսկ հաջորդ 25 տարում ավելացել է 2,3 անգամ։ ՀՍՍՀ արդյունաբերությունը իր զբաղվածությամբ գերազանցում է ժողովրդական տնտեսության ցանկացած ճյուղը։ Բնական է, որ նման տեղաշարժերն ուղեկցվել են աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ (1940 թ. համեմատությամբ այն 1985 թ. ավելացել է 7,4 անգամ) և համախառն արտադրանքի ավելացմամբ (60,2 անգամ)։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղերի զարգացման համար ստեղծված պայմանները, հանքային և աշխատանքային ռեսուրսների, ինժեներական և բանվորական բարձրորակ կադրերի առկայությունը այսուհետ ևս կկանխորոշեն նրա ճյուղային կառուցվածքի նորագույն փոփոխությունները և խոր մասնագիտացումը։ Քանակական աճը կուղեկցվի որակական ցուցանիշների բարելավմամբ, արդյունաբերության համար բարձր որակավորում պահանջող վիտատար ճյուղերի զարգացմամբ։

Բանն այն է, որ ինչպես մոտ ապագայում, այնպես էլ մինչև 2000 թ. Սովետական Հայաստանի աշխատանքային ռեսուրսների վերարտադրության տեմպերը կգերազանցեն թե՛ երկրի եվրոպական մասի հանրապետությունների և թե՛ ՍՍՀՄ միջին տեմպերը։ Օրինակ, եթե երկրի բնակչությունը 1971—1985 թթ. ավելացել է 15,3 %-ով, ապա Հայաստանում՝ 34,9 %-ով։

Հիմնական ուղղություններում խնդիր է դրվում ապահովել բնակչության լրիվ զբաղվածություն։ Դա ինքնին նշանակում է, որ աշխատանքային ռեսուրսներով ապահովված հանրապետությունները էկոնոմիկայի ինտենսիվ զարգացումը պետք է զուգակցեն նոր աշխատատեղերի ստեղծման հետ։ Նաև դրանով են թելադրվում առանձին հանրապետությունների արդյունաբերության զարգացման տեմպերի նկատելի տարբերությունները։ 1986-1990 թթ. ՍՍՀՄ արդյունաբերության համախառն արտադրանքը կավելանա 21-24 %-ով։ Ամենաբարձր աճի տեմպ նախատեսվում է Ուզբեկական, Հայկական ՍՍՀ-ներում (24-27), Ղազախական ՍՍՀ-ում և Տաջիկական ՍՍՀ-ում (23—26)։ Բայց կան մեր հանրապետությունը բնութագրող այլ հատկանիշներ, որոնք հիմք են տալիս արդյունաբերության ավելի արագ զարգացման համար։ Դա, նախ, ինտենսիվ զարգացումը նոր աշխատատեղերի ստեղծման հետ զուգակցելու խնդիրն է։ Մոտ ապագայում հանրապետությունում, մասնավորապես արդյունաբերության մեջ, լրացուցիչ աշխատատեղեր ստեղծելու անհրաժեշտությունը թելադրվում է ոչ միայն բնակչության համեմատաբար արագ աճով, աշխատանքային տարիքի երիտասարդության թվաքանակով (ի դեպ, 12-րդ հնգամյակում այն նախորդ հնգամյակի համեմատությամբ կնվազի), այլև ավանդական արտադրություններից ցածր որակավորում ունեցողների և շմեքենայացված աշխատանքներում ընդգրկվածների ավելի ակտիվ արտամղումով, տնային տնտեսությունից հանրային աշխատանքային ռեսուրսների տեղաշարժման անհրաժեշտությամբ, աշխատունակ բնակչության կազմում նրա առավել ակտիվ տարիքի (24—45 տարեկանների) տեսակարար կշռի անընդհատ բարձրացմամբ, որը կհարատևի մինչև XX դ. վերջը և XXI դ. սկիզբը։

Հայկական ՍՍՀ բնակչության, հատկապես նրա ակտիվ աշխատանքային տարիքի աճը, կանխորոշում է ինչպես մոտ ապագայում, այնպես էլ երկարատև հեռանկարում աշխատանքային ռեսուրսներով հանրապետության ապահովվածության բարձր մակարդակը։ Դա դառնում է հանրապետության տնտեսական զարգացման ուղղությունների ընտրության, այդ թվում՝ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի հետագա կատարելագործման որոշիչ գործոններից մեկը։

Ի տարբերություն աշխատանքային ռեսուրսներով ապահովված մյուս հանրապետությունների, Հայկական ՍՍՀ-ն բնութագրվում է մի շարք այլ առանձնահատկություններով։ Դրանցից առաջինը մշակելի օգտակար հողատարածություններն ընդարձակելու սահմանափակ հնարավորություններն են և բնակչության բավականին բարձր ու անընդհատ ավելացող խտությունը, ջրային, էներգետիկ, հանքահումքային ռեսուրսների ոչ մեծ պոտենցիալը, աղ-

դյունաբերության զարգացման մակարդակը և այնպիսի ճյուղային կառուցվածքը, ուր գերակշռում են գիտատեխնիկական առաջընթացի հիմքը կազմող առաջադիմական և բարձր որակավորման աշխատատար ճյուղերը։

Արդյունաբերության զարգացման խնդիրները պետք է սերտորեն զուգակցել շրջակա միջավայրը և մթնոլորտը չաղտոտող արտադրությունների ստեղծման հետ։ Այդ նպատակով, այսուհետև ևս, հանրապետությունում առավել ուշադրություն է դարձվելու սարքաշինության, էլեկտրոնային ու ռադիոէլեկտրոնային և թեթև արդյունաբերության, ինչպես նաև տեղական գյուղատնտեսական հումքի առկայությամբ պայմանավորված սննդի արդյունաբերության վերամշակող ճյուղերի զարգացմանը։ Դա պայմանավորված է ոչ միայն հանրապետության աշխատանքային ռեսուրսների զարգացման օրինաչափություններով։ Այդ ճյուղերի ձեռնարկությունները մեծ մասամբ լինելով աշխատատար, միաժամանակ ջրի մեծ կարիք չունեն, կարող են տեղաբաշխվել ցանկացած վայրում, կրաղեցնում են համեմատաբար քիչ տարածություն, չեն աղտոտում մթնոլորտն ու միջավայրը։ Այդ ճյուղերի շատ արտադրություններ կարևոր են նաև կանանց աշխատուժն օգտագործելու տեսակետից։

Ինչպես հայտնի է, Հայկական ՍՍՀ-ի էկոլոգիական պայմանների վրա մեծ ներգործություն է ունեցել քիմիական և մասամբ լեռնահանքային արդյունաբերության որոշ ճյուղերի ոչնչով չհիմնավորված, առավել արագ տեմպերով զարգացումը։ Քիմիայի ճյուղերի զարգացումը որոշակի հետք է թողել մի շարք քաղաքների, առանձին շրջանների օդի ու մթնոլորտի մաքրության վրա։ Այդ իմաստով պետք է ավելի ակտիվորեն նպաստել քիմիական արդյունաբերության պակաս ֆոնդատար ճյուղերի՝ հանձինս փոքր քիմիայի, մասնավորապես քիմիական դեղագործության, սպիտակուցային նյութերի, վիտամինների, միկրոբիոլոգիական պատրաստուկների, կենցաղային քիմիայի և այլ ճյուղերի զարգացմանը։

Ճիշտ այդ սկզբունքով պետք է մոտենալ նաև լեռնահանքային արդյունաբերության զարգացման խնդիրներին։ Ճյուղի զարգացման կարևոր ուղղությունը պետք է դառնա ոչ այնքան հանույթի արագ ավելացումը, որ տեղի է ունենում մինչև օրս, որքան մի շարք հումքատեսակների համալիր օգտագործման, կորուստների վերացման, արժեքավոր հազվագյուտ ու ցրված մետաղների կորզման գործակցի բարձրացումը։ Դա իր հերթին կպայմանավորի արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ նրա թանկարժեք նյութերի տեսակարար կշռի, ուստի և ամբողջ արդյունաբերության աճի տեմպերի բարձրացումը։

Սովետական Հայաստանի պայմաններում, ուր համեմատաբար փոքր տարածքի վրա կենտրոնացված են ինդուստրիայի տարբեր ճյուղերի հարյուրավոր ձեռնարկություններ, առաջին պլան է մղվում և առանձնահատուկ նշանակություն ստանում շրջակա միջավայրի պահպանությունը։

Հիմնական ուղղություններում հույժ կարևոր ուշադրություն է նվիրվում նաև փոքր քաղաքների և գյուղական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման, արդյունաբերությունը փոքր քաղաքներում ու գյուղական շրջաններում տեղաբաշխելու, ծայրամասային գյուղական շրջանների ոչ արտադրական ոլորտի ճյուղերը զարգացնելու, գյուղական բնակչության աշխատուժն ավելի արդյունավետ օգտագործելու հարցերին։ Արդյունաբերության և ոչ արտադրական ոլորտի ճյուղերի տեղաբաշխման հետագա բարելավումով միայն կհաղթահարվի աշխատուժի օգտագործման ներկայումս նկատվող միակողմանիությունը, իսկ քաղաքաբնակենտրոնացման քաղաքականությունն իր լուծումը կստանա խոշոր քաղաքների բեռնաթափման և փոքրերի ու գյուղական շրջանների ավելի արագ տեմպերով զարգացման մեջ։

Շրջաններում արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը ներազդում է նաև գյուղական բնակչության համակեցության բոլոր կողմերի վրա, աճում են գյուղական բնակչության կուլտուրական պահանջմունքները, ավելանում գյուղում աշխատող մտավորականները, ձևավորվում քաղաքային կյանքին հատուկ գծեր։ Թեև վերջին 20—25 տարիներին հանրապետության փոքր քաղաքների բնակչությունն ավելի արագ է աճել, քան մեծերինը, բայց այն

հիմնականում կենտրոնացած է մեծ քաղաքներում։ Խոշոր քաղաքների աճն ըստ ամենայնի սահմանափակելու քաղաքականությունը զուգակցվում է փոքր քաղաքների այնպիսի զարգացման հետ, որպեսզի գրանցում բնակչության դրաղվածությունը համապատասխանի գյուղական բնակչությունն իր նախկին բնակավայրում պահպանելու հետ։ Այդ իմաստով, մեր կարծիքով, նպատակահարմար է ամեն մի տնտեսական շրջանում հոգալ 70-80 հազարանոց քաղաք ձևավորելու մասին։ Այն, տրանսպորտային զարգացած ցանցի պայմաններում, տնտեսական շրջանի բնակչության կետրոնաձիգ պրոցեսը կզուգակցի կենտրոնախույս պրոցեսի հետ։ Տրանսպորտային զարգացած ցանցը քաղաքի ագլոմերացիայում ապրող գյուղական բնակչությանը կապահովի ոչ գյուղատնտեսական բնույթի աշխատանքով։ Գյուղական բնակիչը, աշխատելով քաղաքում, հոժարությամբ կապրի իր նախկին բնակավայրում, իր տանը, որն ունի տնամերձ հողամաս, կան լավ պայմաններ հանգստի, գյուղատնտեսական բնույթի աշխատանքը ոչ գյուղատնտեսականի հետ զուգակցելու համար։ Օրինակ, նրպատակահարմար չէ արգյոք Սևանի ավազանում, Աղստևի և Զանգեզուրի տնտեսական շրջաններում գործող քաղաքներից որևէ մեկին հատկացնել նման դեր։ Ինչ վերաբերում է Արարատյան, Գուգարքի և Շիրակի տնտեսական շրջաններին, ապա այդ դերն արդեն կատարում են տեղի խոշոր և փոքր քաղաքները։

Այսպիսով, ՀՍՍՀ արդյունաբերությունն այսուհետև ևս, մասնագիտացումը խորացնելու հետ մեկտեղ, կպահպանի իր զարգացման համեմատաբար բարձր տեմպերը։ Այդ պայմաններում նրա մի շարք առաջատար ճյուղերում (այլ ճյուղերում ամբողջությամբ) նման տեմպերը կապահովվեն աշխատանքի արտադրողականության աճի հաշվին։ Դա կհանգեցնի արդյունաբերության մեջ (նախորդ հնգամյակի համեմատությամբ) զբաղվածության տեմպերի նվազեցման։ Այնուհանդերձ, նրա մի շարք ճյուղերին բնորոշ կլինի զբաղվածության բարձրացումը։ Արդյունաբերությունը, ընդհանուր առմամբ, կմնա աշխատանքային տարիքի բնակչության մի զգալի մասն ընդգրկող հիմնական բնագավառներից մեկը։

ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության, մասնավորապես արդյունաբերության նվաճումներն ավելի ակնառու կլինեին, եթե զարգացման ընթացքում տեղ չգտնեին էքստենսիվ միտումները, միակողմանիությունն ու իներցիան, եթե Հայաստանի կուսակցական ու սովետական մարմիններն ավելի ակտիվորեն ներգրավվեին վերակառուցման աշխատանքներում։ Այդ պատճառով էլ ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան պլենումում Մ. Ս. Գորբաչովը իրավացի և սուր քննադատության ենթարկեց ՀԿԿ ղեկավարությանը նշելով, որ վերակառուցումը Հայաստանում տեղապտույտ է տալիս։ Նա մատնանշեց, որ «Հանրապետության աշխատավորները մեծ տագնապ են արտահայտում այն իրադրության համար, որ այստեղ ստեղծվել է էկոնոմիկայում և գաղափարա-բարոյական բնագավառում։ Հանրապետությունում հանդես են բերում ոչնչով չարդարացված հանգստություն, պատշաճ պահանջկոտություն չկա կադրերի նկատմամբ»։

Հայկական ՍՍՀ էկոնոմիկան նույնպես զարգանում էր էքստենսիվ հիման վրա, որը հանգեցրեց աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի և արդյունավետության մի քանի այլ ցուցանիշների նվազմանը։ Բավական է ասել, որ, օրինակ, հանրապետությունում հասարակական աշխատանքի արտադրողականության միջին տարեկան աճի տեմպերը 1966-1970 թթ. 6,8 %-ից 1971-1980 թթ. իջան և կազմեցին 4,9 %։ Արդյունաբերության մեջ թեև այդ ընթացքում աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը մնացին անփոփոխ, բայց սկսեցին իջնել 1980-ական թվականների սկզբներին։ Շինարարության մեջ այն 1971-1975 թթ. 7,25 %-ից 1975-1980 թթ. իջավ 3,2 %-ի, Երկաթուղային տրանսպորտում 1975-1980 թթ. կազմում էր 3,6 %, բայց 1981 թ. սկսած այս ճյուղում աշխատանքի արտադրողականությունը ոչ միայն չբարձրացավ, այլև ուներ ավելի ցածր մակարդակ, քան նախորդ տասնամյակում։ Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ, աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը 1960-1970 թթ. զգալիորեն զիջել են ՍՍՀՄ միջին ցուցանիշին։ Դա բացատրվում է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով։ Առաջին պլան է մղվել էքստենսիվ զարգացումը։

Արտադրության ճյուղային կառուցվածքը և արտադրանքի տեսականին ենթարկվել է հաճախակի փոփոխման, դանդաղ է ընթացել արտադրության մեքենայացումը, հին մակնիշի մեքենաների ու սարքավորումների փոխարինումը նոր սերնդի մեքենաներով։ Աշխատանքի և արտադրության անբավարար կազմակերպման պատճառով այստեղ սարքավորումն ու աշխատուժը ռացիոնալ չեն օգտագործվել, արդյունաբերության մեջ բացակայել են առանձին արտադրամասերի, հաստոցների տարբեր խմբերի կարողությունների միջև անհրաժեշտ համամասնությունները, ձգձգվել են սարքավորումների տեղակայման պլանային ժամկետները և այլն։ Արդյունաբերության զարգացման ընթացքում, անտեսվել են հողային ռեսուրսները բանականորեն օգտագործելու խնդիրները (մասնավորապես Երևան քաղաքում)։

1960-1970-ական թվականներին հաճախ, արդյունաբերության նոր ճյուղեր ստեղծելիս անտեսվել են համապատասխան հումքով և էներգիայով հանրապետության ապահովվածության ցածր մակարդակը, բնակչության զարգացման տվյալ փուլի ժողովրդագրական առանձնահատկությունները, երիտասարդ աշխատուժի առավել արդյունավետ օգտագործման, բնակչության և արտադրության տեղաբաշխման հարցերը։ Դա մասնավորապես վերաբերում է քիմիական և հանքահումքային արդյունաբերությանը։ Թեև դրանց աննախընթաց զարգացումն ուղեկցվել է ճյուղային կառուցվածքի առաջադիմական տեղաշարժերով, բայց անտեսվել են առանձին արտադրությունների էներգատարությունը, հանրապետության ջրային ռեսուրսների լարվածությունը, բնակլիմայական պայմանները, մասնավորապես բնապահպան գործոնները, բնակչության բարձր խտությունը։ Դա ըստ էության չի համապատասխանել ինչպես արդյունաբերության այդ ճյուղերի մասնագիտացման հետագա խորացման, այնպես էլ հանրապետության աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման շահերին։ Աշխատատար ճյուղերի ստեղծումը մեքենաշինության և թեթև արդյունաբերության մեջ չի զուգակցվել որակյալ աշխատուժի պրոբլեմի լուծման հետ։ 1970-ական թվականներին բնակչության կազմում աշխատանքային տարիքի մարդկանց բարձր տեսակարար կշիռը, անձնական օժանդակ և տնային տնտեսություններից որակավորում չունեցող աշխատուժի մեծ զանգվածների ազատումը, ուստի և, հանրային տնտեսության մեջ նրանց զբաղվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, թեթևագրեցին մեքենաշինության, թեթև արդյունաբերության և բնակչությանը սպասարկող մի շարք աշխատատար ճյուղերի ստեղծումն ու զուգակցումը։ Այդ բոլորը բավականին երկար ժամանակ՝ 1961-1970 թթ., պայմանավորեցին արտադրության աճի էքստենսիվ գործոնի գործողության շրջանակների ընդլայնումը։ Արդյունաբերության մեջ պակասեց աշխատանքի արտադրողականության հաշվին ստեղծվող արտադրանքի բաժինը։ 1961-1975 թթ. արդյունաբերության մեջ աշխատողների միջին տարեկան աճը (5,7 %) գերազանցեց աշխատանքի արտադրողականության աճի տեմպերին (4,5 %)։ Այդ տարբերությունն ավելի արտահայտիչ էր 1960-ական թվականների սկզբներին։ 1961-1965 թթ. աշխատողների թվի միջին տարեկան աճի տեմպերը կազմեցին 6,9 %, աշխատանքի արտադրողականության համապատասխան ցուցանիշը գերազանցելով 2,3 անգամ։ Կապիտալ ներդրումների բարձր տեմպերի առկայության պայմաններում նոր շինարարության մեծ մասշտաբները սահմանափակվեցին գործող ձեռնարկություններում հին սարքավորումները նորերով փոխարինելու, արտադրության բոլոր օղակներում ձեռքի աշխատանքը ավելի ինտենսիվ արտամղելու հնարավորությունները։ Արտադրության մասշտաբների ընդլայնման համեմատ դա հանգեցրեց աշխատուժի դեֆիցիտի։ Արտադրության էքստենսիվ աճը բնորոշ դարձավ հանրապետության արդյունաբերության բոլոր ճյուղերին։

Անկասկած, չպետք է անտեսել, որ նյութական արտադրության ճյուղերում էքստենսիվ զարգացումը ուղեկցվել է նաև ինտենսիվ զարգացման հետ։ Հայտնի է, որ Կ. Մարքսը ընդլայնված վերարտադրությունը համարում էր էքստենսիվ, եթե այն տեղի է ունենում արտադրության ասպարեզի ընդլայնման և ինտենսիվ՝ ավելի արդյունավետ արտադրության միջոցների կիրառման

պայմաններում։ Հայաստանում թե՛ գործող ճյուղերի ընդլայնումը, թե՛ նորերի ստեղծումն էքստենսիվ բնույթ է կրել այնքանով, որ այն կատարվել է նախ, նոր լրացուցիչ աշխատուժ ընդգրկելու հիման վրա։ Երկրորդ, միշտ չէ, որ գործող արտադրություններում այն ուղեկցվել է արտադրական կարողությունների վերակառուցմամբ ու արդիականացմամբ։ Իսկ ընդլայնումը միշտ չէ, որ կատարվել է ավելի կատարելագործված հիմքի վրա։ Բայց դրա հետ մեկտեղ, տեղի է ունեցել վերակառուցում։ Ինչ վերաբերում է նորաստեղծ ճյուղերին, ապա դրանց ստեղծումն իրականացվել է ինչպես հին, այնպես էլ նոր սերնդի մեքենաներ գործարկելու, նոր աշխատողներ ընդգրկելու միջոցով։ Վերջինս, որ էքստենսիվ զարգացման արտահայտություն է, իր հերթին, պայմանավորել է աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացումը, քանի որ նորաստեղծ ճյուղերում ընդգրկված լրացուցիչ աշխատուժն իր որակական հատկանիշներով, մեծ մասամբ, տարբերվում է գործող ձեռնարկություններում օգտագործվող աշխատուժից։ Դրանցում արտադրության բարձր տեխնիկական կազմը և աշխատողների բարձր որակը ենթադրում է աշխատանքի արտադրողականության համեմատաբար բարձր մակարդակ։ Ուստի էքստենսիվ ընդլայնումը ըստ էության ուղեկցել է ինտենսիվ զարգացմանը։

ՍՄԿԿ XXVII և ՀԿԿ XXVIII համագումարները, ինչպես նաև ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան և հունիսյան (1987) պլենումները նոր խնդիրներ են դրել Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու ուղղությամբ։ Արագացման գործում մեծ է արտադրության համակողմանի ինտենսիվացման դերը, որը պետք է ապահովվի գիտատեխնիկական առաջընթացի ծավալման, էկոնոմիկայի կառուցվածքային վերակառուցման և ընդհանրապես հասարակության նորացման, մարդկային գործոնի դերի բարձրացման միջոցով։ Մեր երկրի աշխատավորությունը ձեռնամուխ է եղել էկոնոմիկայի և հասարակական կյանքի բոլոր ասպարեզների վերակառուցման ուղղությամբ կուսակցության առաջադրած դժվարին ու պատասխանատու խնդիրների իրականացմանը։ Իսկ վերակառուցումը, ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան պլենումում, նշանակում է լճացման պրոցեսների վճռական հաղթահարում, արգելակման մեխանիզմի փշրում, սովետական հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու հուսալի և արդյունավետ մեխանիզմի ստեղծում։ Այստեղ վճռական տեղ է հատկացվում մարդկային գործոնին։ Դա բացատրվում է ոչ միայն նրանով, որ բնակչությունը հասարակական կյանքի զարգացման, նրա վերակերտման ու վերակառուցման օբյեկտն է ու սուբյեկտը, այլև բազմաբարդ այլ հանգամանքներով։ Չէ՞ որ մարդը արտադրողական ուժերի տարրերից մեկն է, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ գլխավոր արտադրողական ուժը։ Դրա հետ մեկտեղ մարդը արտադրական հարաբերությունների կրողն է։ Եվ եթե այսօր դրվում է էկոնոմիկայի, հասարակական կյանքի բոլոր ասպարեզների վերակառուցման, դեմոկրատիայի հետագա զարգացման հարցը, ապա այն առաջին հերթին սկսվում է մարդու՝ արտադրողական ուժերի այդ գլխավոր տարրի, գործունեության վերակառուցումից։

Սովետական Հայաստանում զարգացել է նաև գյուղատնտեսությունը։ Ցարիզմի օրոք Հայաստանում գյուղատնտեսության զարգացումը միակողմանի բնույթ էր կրում, իսկ մասնագիտացումը չափազանց թույլ էր։ Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում արդյունաբերության հետ միասին վայրէջք ունեցավ նաև գյուղատնտեսությունը։ Սովետական իշխանության տարիներին նոր հողերի յուրացումը, ջրանցքների լայն ցանցի ստեղծման միջոցով ոռոգելի հողատարածությունների ավելացումն ուղեկցվում էր արտադրության պրոցեսների մեքենայացմամբ, գյուղատնտեսության մասնագիտացմամբ ու ճյուղային կառուցվածքի կատարելագործմամբ, ցանքաշրջանառության արդի մեթոդների արմատավորմամբ։ Դա առաջին հերթին վերաբերում է խաղողի, պտղատու այգեգործության, ծխախոտի, խորդենու, կարտոֆիլի, բոստանային և ներային կուլտուրաների մշակությանը հատկացված հողատարածությունների ավելացմանը, անասունների ցեղային հոտի բարելավմանն ու գլխաքանակի ավելացմանը։ 1941—1985 թթ. ՀՍՍՀ հացահատիկային կուլտուրաների հողա-

տարածությունները մոտ 60 %-ով կրճատելու և բամբակագործությունը վերացնելու պայմաններում, ընդհանուր ցանքատարածություններն ավելացել են։ Այսպես, կերային կուլտուրաներինն ավելացել է 6,84 անգամ, կարտոֆիլ և բանջարաբոստանային կուլտուրաներինը՝ ավելի քան երկու անգամ։ Ինչ վերաբերում է խաղողին և պտղատու այգեգործությանը, որոնք աչքի են ընկնում բարձր աշխատատարությամբ, ապա նույն տարիներին առաջինին հատկացված հողատարածությունները ավելի քան կրկնապատկվել են, իսկ երկրորդինը՝ ավելացել է մոտ 2,9 անգամ։

Այսպիսով, խոսքը վերաբերում է Հայաստանի գյուղատնտեսության մեջ առավել բարձր եկամտաբերությունը և ՍՍՀՄ գյուղատնտեսական արտադրության մեջ դրա մասնագիտական ուղղությունը բնորոշող ճյուղերի ընդլայնմանը։ Հասկանալի է, որ դրանք բավարարում են ոչ միայն տեղական պահանջները, այլև իրենց արդյունաբերական կարևորությամբ ստանում են համամիութենական նշանակություն։

ՀՍՍՀ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունը և աշխատատար կուլտուրաների արտադրության ավելացումն ուղեկցվում են աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացմամբ։ Դրա վկայությունն է գյուղատնտեսության համախառն արդյունքի ավելացման պայմաններում բնակչության զբաղվածության խիստ կրճատումը, աշխատանքի արտադրողականության և յուրաքանչյուր հեկտարի բերքատվության բարձրացումը։

1926 թ. մարդահամարի տվյալներով ՀՍՍՀ-ում բնակչության զբաղվածությունը գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ կազմում էր 89 %, 1939 թ. տվյալներով՝ ավելի քան 60, 1960 թ՝. 44, իսկ ներկայումս այն իջել և հասել է 20 %-ի։ Խնդիրն այն է, որ աշխատուժի վերաբաշխման պրոցեսում զբաղվածների ընդհանուր թվում ոչ միայն իջնում է գյուղատնտեսության բնագավառում զբաղվածների տեսակարար կշիռը, այլև պակասում է նրանց բացարձակ թիվը՝ գյուղատնտեսական արտադրության ընդլայնման և համախառն արտադրանքի ավելացման պայմաններում։ Ընդ որում, ՀՍՍՀ գյուղատնտեսության մեջ զբաղվածների (ներառյալ նաև անձնական օժանդակ տնտեսություններում աշխատողներ) բացարձակ թիվը, 1960 թ. համեմատ, 1985 թ. պակասել էր զգալի չափով։ Այնուհանդերձ 1960-ական թվականների վերջերը այն սահմանագիծն էին, երբ ՀՍՍՀ գյուղատնտեսությունը բնակչության գերակշռող մասը զբաղեցնելու իր երբեմնի դիրքերը վերջնականապես զիջեց արդյունաբերությանը։ Սակայն պետք է նշել, որ նոր հողերի յուրացումը, առավել աշխատատար կուլտուրաների ցանքատարածությունների ավելացումը, ինչպես նաև կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների անձնական օժանդակ տնտեսությունների սահմանների ընդարձակումը հանգեցրել են գյուղատնտեսության մեջ զբաղված բնակչության բացարձակ թվի չնչին չափերով ավելացմանը։

Աշխատանքային ռեսուրսների ակտիվ հաշվեկշիռ ունեցող մյուս հանրապետություններն ունեն գյուղատնտեսության ընդարձակման լայն հնարավորություններ, որից զուրկ է Հայկական ՍՍՀ-ն։ Հետևապես, եթե այդ հանրապետությունների գյուղատնտեսության մեքենայացման հետևանքով նրա արտադրության մեկ ճյուղից ազատված աշխատանքային ռեսուրսները կարող են ընդգրկվել մեկ այլ ճյուղում, ապա Հայաստանի գյուղատնտեսությունից ազատված աշխատանքային ռեսուրսները, մեծ մասամբ, գյուղատնտեսության այլ ճյուղերում ընդգրկվել չեն կարող։ Պետք է նկատի ունենալ և այն, որ գյուղատնտեսության մեքենայացման համեմատաբար ցածր աստիճանի, նրա էքստենսիվ զարգացման, լճացման երևույթների առկայության պայմաններում, երբ տարիներով հնգամյա պլաններով նախատեսվող առաջադրանքները չեն կատարվել, գյուղատնտեսության մեջ զբաղվածությունը մնացել է բավականին բարձր մակարդակի վրա։ ՀՍՍՀ գյուղատնտեսությունն իր ֆոնդազինվածության և էներգազինվածության մակարդակով ընդհանրապես շատ է զիջում ՍՍՀՄ միջին ցուցանիշին։ Իսկ վերջինս իր հերթին չի բնութագրվում բար-

ձը՝ մակարդակով և ետ է մնում արդյունաբերության ու ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի ֆոնդազինվածության և էներգազինվածության մակարդակից։ Այդ և աշխատանքների կազմակերպման բնագավառում գոյություն ունեցող մի շարք պատճառներով գյուղատնտեսության աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը տարիների ընթացքում իջնում են։ Բավական է ասել, որ եթե 1961-1970 թթ. ՀՍՍՀ գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության միջին տարեկան տեմպերը կազմել են 3,5 %, ապա 1971-1980 թթ՝. 1,85, իսկ 1981-1985 թթ՝. լոկ 1 %։ 1984 թ. սկսած դրանք բարձրանում են. 1984 թ. համեմատությամբ 1985 թ. աճը կազմել է 6,5 %։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններից մեկը նրա ճյուղային կառուցվածքի հետագա կատարելագործումն է։ Դա կապված է նրա մասնագիտացման հետագա խորացման հետ։ Խոսքը վերաբերում է Հայաստանի գյուղատնտեսության առավել բարձր եկամտաբերության և ՍՍՀՄ գյուղատնտեսության մեջ նրա մասնագիտական ուղղությունը բնորոշող այնպիսի ճյուղերի ընդլայնմանը և հետագա զարգացմանը, ինչպիսիք են խաղողի արդյունաբերական նշանակություն ունեցող և բնակչության շրջանում մեծ պահանջարկ վայելող տեսակները, մի շարք բանջարաբոստանային կուլտուրաներ, խորդենին, ծիրանը և այլն։ Դրանք բավարարում են ոչ միայն տեղական պահանջները, այլև դուրս են գալիս հանրապետության սահմաններից և ստանում համամիութենական նշանակություն։

Հայաստանի գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման կարևոր գործոն է աշխատանքի գիտական կազմակերպումը։ Փաստերը վկայում են, որ ներկայումս, գյուղատնտեսության արտադրության կազմակերպման գործում եղած թերությունների հետևանքով եկամտաբեր շատ կուլտուրաներ, բարձր բերք չեն ապահովում։ Ոչ միայն հողատարածությունների որոշ մասը չի օգտագործվում ըստ նպատակի, այլև լավ չի կազմակերպվում բերքահավաքը, ստացած բերքի մթերումն ու առաքումը, որի հետևանքով մրգերի, հատապտուղների մի մասը փչանում է դեռ մթերակայան չհասած։

Հողասակավությունն է՛լ ավելի է սրում Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը կատարելագործելու և մասնագիտացումը խորացնելու անհրաժեշտությունը։ Բայց հենց այդ հնարավորությունները ևս բավարար չեն օգտագործվել։ Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումն առավել բնորոշ պետք է լինի սակավահող հանրապետություններին։ Ինչու ձմռանը և վաղ գարնանը թարմ բանջարեղենը սակավ է, մինչդեռ կոլտնտեսային շուկան լցված է հարևան հանրապետություններում մշակված այդ մթերքներով։ Ինդուստրիալ հիմունքներով ինտենսիվ եղանակով ձմռան և վաղ գարնան ամիսներին դրանց արտադրության մասշտաբների մեծացումը կհանգեցներ մթերքների արտադրության արժեքի իջեցմանը և, միաժամանակ, հնարավորություն կստեղծեր դրանցից օգտվելու բնակչության ավելի լայն զանգվածների։ Էլ չենք խոսում այն մասին, որ հանրային տնտեսությունում տարին բոլոր ծաղկի մշակությունը դարձել է լուրջ պրոբլեմ։ Բուսաբուծության հետ միասին ինտենսիվ զարգացումը պետք է ընդգրկի խոշոր եղջերավոր անասնապահությունը։ Մի՞թե դա չի թելադրում նաև հողասակավությունը։

Հողօգտագործման հետ անմիջապես առնչվող կարևոր հարց է քաղաքաշինությունը։ Վերջինս տասնամյակներ շարունակ գործել է ի վնաս գյուղատնտեսության արժեքավոր կուլտուրաների հողատարածությունների կրճատման։ Ոչ մի կերպ չի արդարացվում Արարատյան դաշտավայրում հազարավոր հեկտարներ խաղողի այգիները ոչնչացնելով գործարանային շենքերի և բնակելի զանգվածների կառուցումը, որ կատարվում էր ոչ միայն հեռավոր անցյալում, այլև այսօր։ Մինչդեռ քաղաքները կարելի էր ավելի արդյունավետ ընդարձակել վատ հողակտորներում։

Այսպիսով, հասարակական աշխատանքի տարածքային բաժանման վրա հիմնված գյուղատնտեսական արտադրության տնտեսապես նպատակահարմար մասնագիտացումը, տեղական բնական ռեսուրսների լրիվ և ռացիոնալ

օգտագործումը, Հայաստանի գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունը ներկայացնող ճյուղերի ինտենսիվ զարգացման հնարավորությունների ապահովումն ու լրիվ օգտագործումը, քաղաքների և արդյունաբերական կենտրոնների մերձքաղաքային տնտեսության ինտենսիվ հեռանկարներով զարգացումը գյուղատնտեսության արտադրության արդյունավետության հետագա բարձրացման կարևոր ուղղությունն են։

1921-1985 թթ. ժողովրդական տնտեսության մեջ կատարված վիթխարի կապիտալ ներդրումների շնորհիվ, հանրապետության ինդուստրիալ դեմքն արմատապես փոխվեց։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ինդուստրիալ զարգացումն ապահովելու հետ մեկտեղ հիմնվել են նորանոր քաղաքներ, ավաններ ու գյուղեր, մեծացել ու գեղեցկացել են հները, կառուցվել արտադրական և ոչ արտադրական բնույթի բազմաթիվ օբյեկտներ, արդյունաբերական ձեռնարկություններ, էլեկտրակայաններ, տրանսպորտի և կապի հանգույցներ, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների նորանոր շենքեր, դպրոցներ, առողջարաններ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, մսուր-մանկապարտեզներ, բնակելի շենքեր, առևտրի կենցաղի և բնակչության սպասարկման հաղարավոր այլ օբյեկտներ։

Նյութական արտադրության ճյուղերի զարգացումն իրական պայմաններ ստեղծեց հանրապետության բնակչության սպասարկումը բարելավելու համար։ Այդ է վկայում նյութական արտադրության ճյուղերի համեմատությամբ ոչ արտադրական ոլորտներում զբաղվածների առավել արագ աճը։ Բանն այն է, որ եթե նյութական արտադրության ճյուղերում զբաղվածության նվազումը կամ դանդաղ աճը փոխհատուցվում է աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, ապա բնակչության սպասարկումը բարելավելու պայմանը, դրա հետ մեկտեղ, զբաղվածության ծավալումն է։ Ահա թե ինչու ոչ արտադրական ոլորտում զբաղվածությունն ավելանում է առավել արագ տեմպերով։ Օրինակ, ՀՍՍՀ-ում վերջին 10-15 տարիներին ոչ արտադրական ոլորտում զբաղվածների աճի տեմպերը նյութական արտադրության ճյուղերին գերազանցել են 4-5 անգամ։ Հանրապետության ոչ արտադրական ոլորտի ճյուղերում 1985 թ. ընդգրկված էր զբաղվածների ընդհանուր թվի 29 %-ը։ ՍՍՀՄ-ում, օրինակ, այդ միջին ցուցանիշը կազմում է 26,9 %։ Դա, անկասկած, բացատրվում է ոչ արտադրական ոլորտի այնպիսի ճյուղերում զբաղվածության բարձր տեսակարար կշռով, ինչպիսիք են՝ լուսավորությունը և առողջապահությունը։ Դժվար չէ նկատել, որ դա կապված է բնակչության ավելի արագ աճի և նրա կազմում երեխաների առկայության անհամեմատ բարձր տեսակարար կշռի հետ։

Տեղի է ունենում գյուղի և քաղաքի բնակչության կենսապայմանների մերձեցման պրոցես, որին նպաստում է գյուղի սոցիալ-տնտեսական կառուցվածքի կատարելագործումը։

Երկրում իրականացվող վիթխարի սոցիալ-տնտեսական վերափոխությունները, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ինդուստրիալ զարգացումը և դրանց պահանջմունքներին համապատասխան ինժեներատեխնիկական, բանվորական և գյուղատնտեսական կադրերի պատրաստումը, տարրական և յոթնամյա պարտադիր կրթության իրականացումը գյուղում և քաղաքում համատարած գրագիտության սկիզբը դրին։ Եթե 1960—1961 ուստարում հանրապետությունում ուսուցման բոլոր ձևերում ընդգրկված էին 442 հազար մարդ, ապա 1985-1986 թթ. այդ թիվը հասավ մեկ միլիոն 309 հազարի։ Իսկ դա նշանակում է, որ հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր երեք մարդուց ավելի քան մեկն ընդգրկված է ուսումնական որևէ օղակում։ Այդ ընթացքում հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը գրեթե կրկնապատկվեց. 1985-1986 ուստարում այն հասավ 601 հազարի։ Դրան համապատասխան դպրոցներում ուսուցիչների թիվը 1940-1941 ուստարվա 11,4 հազարից 1985-1986 ուստարում հասավ 50,1 հազարի՝ 1914-1915 թթ. 1146 ուսուցչի փոխարեն։ Մեծ են նվաճումները դպրոցաշինարարության և աշակերտների կրթական մակարդակի բարձրացման գործում։ Խիստ ավելացել են երկարօրյա դպրոցներում և խմբերում սովորողները։ Ընդ որում, երկարօրյա դպրոց-

ների ու խմբերի մոտ 60, իսկ գրանցում սովորողների 45 %-ը գյուղական վայրերում են։

Վերջին տարիներին խիստ ընդլայնվել է նախադպրոցական մանկական հիմնարկների ցանցը։ 1920-1985 թթ. շուրջ 150 հազար երեխաների համար շահագործման է հանձնվել ավելի քան 1200 մանկական նախադպրոցական հիմնարկություն։

Հայկական ՍՍՀ-ն հատկապես աչքի է ընկնում բարձրագույն և միջնակարգ մասնագիտությամբ կադրերի պատրաստման տեմպերի աճով։ Նախահեղափոխական Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։ Ներկայումս հանրապետության 13 բուհերում և 66 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում են մոտ 103 հազար պատանիներ ու աղջիկներ, իսկ շրջանավարտների թիվը հասնում է 27,4 հազարի։

1985—1986 ուստարում հանրապետության բնակչության 10 հազար շնչի հաշվով բուհերում սովորում էին 163, միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 142 մարդ։ 1929—1985 թթ. դրանք ավարտել են 582,4 (բարձրագույն՝ 246,6 միջնակարգ մասնագիտական՝ 335,8) հազար մասնագետներ, ընդ որում, այդ շրջանավարտների մեծ մասը՝ միայն վերջին տասնամյակում։

Հանրային արտադրության մեջ խիստ ավելացել է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ աշխատողների թիվը։ 1985 թ. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների ընդհանուր թիվը հասավ 363,6 հազարի։ Դա նշանակում է, որ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված յուրաքանչյուր 1000 բանվոր-ծառայողի (առանց կոլտնտեսություններում զբաղված մասնագետների) ընկնում է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ 255 մարդ։

Դրա հետ մեկտեղ, խիստ անհամապատասխանություն է ստեղծվել ժողովրդական տնտեսության մեջ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ աշխատողների թվի հարաբերակցության մեջ։ Այդ հարաբերակցությունը պետք է լինի հօգուտ միջնակարգ մասնագիտական կրթության։ Մինչդեռ 1980 թ. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ բարձրագույն կրթություն ունեցող 100 մասնագետների հաշվով աշխատում էր միջնակարգ կրթությամբ 74 մարդ։ 1985 թ. բարձրագույն կրթությամբ 100 մարդու հաշվով աշխատում էր միջնակարգ մասնագիտական կրթությամբ 81 մարդ։ Դա հանգեցրել է նրան, որ արտադրության միջին օղակներում ազատ հաստիքային տեղերը զբաղեցնում են բարձրագույն կրթությամբ մասնագետները։ Դա չի համապատասխանում այսօրվա պահանջներին։ Այդ առումով միանգամայն ճիշտ կլինի ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1987 թ.) պլենումի ոգուն համապատասխան որակյալ աշխատուժի լրացուցիչ պահանջը բավարարել սեփական միջոցների հաշվին։ Նման պայմաններում տնտեսաշվարկային հիմունքներով աշխատող ամեն մի օղակ կմտահոգվի որակյալ կադրերի նկատմամբ իր պահանջի իրական չափերով և համապատասխան մասնագետներով ձեռնարկությունը համալրելու խնդրով։ Մյուս կողմից, պետք է լրջորեն մտահոգվել բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության չափերը կրճատելու և դրա փոխարեն միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում այն ընդլայնելու մասին։

Հետպատերազմյան տարիներին Հայկական ՍՍՀ բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում հատկապես ծավալվեց նորագույն ճյուղերին՝ մեքենաշինությանն ու սարքաշինությանը, էլեկտրամեքենաշինությանն ու էլեկտրաշինությանը, էլեկտրոնային և ռադիոէլեկտրոնային տեխնիկային, սպասարկող մասնագետ կադրերի պատրաստումը։

Գիտության ու տեխնիկայի խոշորագույն տեղաշարժերը, վերափոխելով արտադրության տեխնիկական բազան, նոր պահանջներ են առաջադրում նաև բանվորական որակյալ կադրերի պատրաստմանը։ Դա բխում է արտադրաուժերի իրային տարրերին անձնական գործոնի լրիվ համապատասխանության ընդհանուր տնտեսական օրենքի օբյեկտիվ պահանջներից և ապահովվում է

այդ տարրերի ներդաշնակ զարգացման շնորհիվ։ Կյանքի կողմից առաջադրվող այդ հրամայական պահանջով էլ բացատրվում է ներկայումս երկրում կիրառվող դպրոցական ռեֆորմը։ Վերջին երեք տասնամյակներում մեծ տեղաշարժեր են կատարվել պրոֆտեխկրթության համակարգում, ավելացել է այդ ցանցում պատրաստվող բանվորական կադրերի թիվը։ Բավական է ասել, որ գրանցում սովորողների թիվը 1950—1951 ուստարվա 3000-ից, 1985—1986 թթ. ուստարում հասել է 47 հազարի, իսկ շրջանավարտների թիվը 1,8 հազարից՝ 30 հազարի։ ՀՍՍՀ պրոֆտեխնիկական կրթության համակարգում միայն վերջին 10 տարում՝ 1976—1985 թթ., պատրաստվել է 311 հազար մասնագետ, իսկ անմիջապես արտադրությունում ուսուցման միջոցով նոր պրոֆեսիաներ ու մասնագիտություններ ձեռք բերած բանվորների թիվը կազմել է 680 հազար։

Սովետական Հայաստանը բնութագրվում է նաև կուլտուր-լուսավորական հիմնարկությունների զարգացած ցանցով։ Այսպես, եթե 1914 թ. հանրապետության այժմյան տարածքում գործում էին ընդամենը 13 գրադարան (9000 օրինակ գրքային ֆոնդով), ապա 1977 թ. դրանց թիվը հասավ 1397-ի (21379 հազար օրինակ գրքային և ամսագրային ֆոնդով)։ 1985 թ. հանրապետությունում կար 1259 ակումբ, որից 964-ը գյուղական վայրերում, 51 պատմահեղափոխական, պատմական, գավառագիտական, բնագիտական, արվեստագիտական, գրականության թանգարաններ, որոնց հաճախորդների թիվը տարեկան հասնում է շուրջ 2,7-2,8 մլն մարդու։

1913 թ. հանրապետությունում տպագրվել են 55 անուն գիրք, թերթ և ամսագիր՝ 80 հազար տպաքանակով, իսկ 1985 թ. թողարկվել է 1115 անուն՝ 12128 հազար ընդհանուր տպաքանակով։ 1913 թ. լույս տեսնող 6 թերթի փոխարեն, 1985 թ. հրատարակվում էր 92 թերթ՝ մոտ 1,6 մլն ընդհանուր տպաքանակով և 89 անուն ամսագիր ու այլ պարբերականներ՝ ավելի քան 25,5 մլն տպաքանակով։ 1985 թ. հանրապետությունում գործում էին 944 կինոսարքեր, որոնցից 649-ը տեղակայված էին գյուղական վայրերում։ Այս ամենի հետ մեկտեղ, Հայկական ՍՍՀ բնակչության կուլտուրական պահանջմունքները բավարարում են նաև հանրապետության սահմաններից դուրս ռուսերեն և այլ լեզուներով հրատարակված պարբերականներն ու գրքերը։

Բնակչության կենսագործունեության, գյուղի և քաղաքի կենսամակարդակների մերձեցման խնդրում մեծ դեր է խաղացել առողջապահության զարգացումը։ Բավական է ասել, որ 1913 թ. բնակչության 10 հազար շնչին ընկնում էր 2,1 հիվանդանոցային մահճակալ, 0,7 բժիշկ (միայն քաղաքներում), 1,5 միջին բուժանձնակազմ։ 1985 թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմեցին՝ 83,5, 37,9, 91,3։

Առողջապահության զարգացման շնորհիվ զգալի չափով կրճատվեց մահացությունը, հատկապես մանկամահացությունը։ 1985 թ. ընդհանուր մահացությունը 1913 թ. համեմատությամբ կրճատվել է ավելի քան 3, մանկամահացությունը՝ 8 անգամ։ Ներկայումս Սովետական Հայաստանում բնակչության 1000 շնչի հաշվով մահացողների թիվը կազմում է 5,9 մարդ։ Դա սոցիալական բնագավառում հանրապետության կարևորագույն նվաճումներից է։

Մեծ փոփոխություններ են կատարվել նաև բնակչության կենցաղասպասարկման ասպարեզում։ Հանրապետության ամենահեռավոր անկյուններում անգամ վաղուց մուտք են գործել էլեկտրական էներգիան, ռադիոն, հեռուստացույցը։ Գյուղերի մեծ մասն ունի փոստ և հեռախոս։ Հանրապետության գրեթե բոլոր գյուղերում թերթերը ընթերցողին են հասնում նույն օրը։ Շատ գյուղական տներում տեղակայված են հեռախոսների ապարատներ։ 1985 թ. հանրապետության յուրաքանչյուր 100 ընտանիքի ընկնում էր 514 ժամացույց, 71 ռադիոընդունիչ և ռադիո, 96 հեռուստացույց, 101 սառնարան, 79 լվացքի մեքենա, 67 կարի մեքենա, 29 էլեկտրական փոշեծծիչ և այլն։

Հանրապետությունում կենցաղասպասարկման ձեռնարկությունների հետ միասին ավելացել է դրանցում աշխատողների թիվը։ Մասնավորապես դա նկատելի է գյուղական վայրերում։ 1961-1985 թթ. կենցաղասպասարկման ձեռնարկությունների թիվը քաղաքներում ավելացել է 2,65, իսկ գյուղական վայրերում՝ մոտ 6 անգամ։ 1971—1985 թթ. քաղաքներում կենցաղծառայությունների

ծավալն ավելացել է մոտ 4, իսկ աշխատողների միջին տարեկան թիվը 1,5 անգամ, իսկ գյուղական վայրերում՝ համապատասխանաբար՝ 6,5 և ավելի քան 2,7 անգամ։ 1985 թ. գյուղական վայրերում գործում էր հանրապետության կենցաղսպասարկման ձեռնարկությունների 38 %-ը, որոնք իրականացնում էին կենցաղծառայությունների ծավալի մոտ 26 %-ը։

Որոշակի տեղաշարժեր են կատարվել ոչ արտադրական ոլորտի նաև այլ ճյուղերում։ Առևտրի զարգացումը կապված է ոչ միայն ապրանքադրամական հարաբերությունների ծավալման, այլև քաղաքային բնակչության ավելացման, աշխատավորության դրամական եկամուտների մեծացման հետ։ Որոշակի դեր են խաղացել նաև գյուղական բնակչության զբաղմունքի և սոցիալական բնույթի փոփոխությունները, բանվոր ծառայողների թվաքանակի աճը, կոլտնտեսություններում դրամական վարձատրության իրականացումը, գյուղական ընտանիքների եկամուտների մեջ աշխատավարձի բաժնի ավելացումը և այլն։

Ավելի ու ավելի ինտենսիվ է դարձել մարդկանց և իրերի միջև գոյություն ունեցող կապը, ավելացել մարդկանց միաժամանակյա օգտագործած իրերի քանակը, կրճատվել մինչև իրերն օգտագործելու ժամկետները։ Իրերը մարդկանց սկսել են ծառայել ավելի քիչ ժամանակով, քանի որ սպառողն իր օգտագործած իրերը դեռևս ֆիզիկապես չմաշած, փոխարինում է նոր, ավելի մոդայիկ իրերով։ Ուստի ապրանքաշրջանառության աճը մի կողմից բնակչության գնողունակության բարձրացման, հասարակության առաջընթացի, հասարակական արտադրության զարգացման, մյուս կողմից նոր ճաշակի ձևավորման արտահայտությունն է։ ՀՍՍՀ-ում պետական, կոոպերատիվ (ներառյալ նաև հասարակական սնունդը) և մասնրածախ ապրանքաշրջանառության ծավալը 1971-1985 թթ. ավելացել է 2,5 անգամ։ Այդուհանդերձ, առայսօր բնակչության անընդհատ աճող պահանջմունքները շատ արդյունաբերական ու պարենային ապրանքների գծով դեռևս չեն բավարարվում։ Պահանջարկը շատ է առաջ անցել առաջարկից, թեև բնակչության պահանջարկի ձևավորման հիմնական գործոնն արտադրությունն է։ Բայց գիտատեխնիկական առաջընթացի և տրանսպորտային ցանցի զարգացման ներկա դարում, երբ ավելի ու ավելի ինտենսիվ բնույթ են ընդունում երկրի տարբեր տնտեսական շրջանների արտադրական և առևտրական կապերը, ծավալվում է միջազգային առևտուրն ու տուրիզմը, մշակութային կապերը, երկրի ամեն մի տնտեսական շրջանի բնակչության պահանջմունքների ձևավորման գործում նրա նյութական արտադրության զարգացման և հասարակական առաջընթացում ձեռք բերած մակարդակի հետ միասին վճռական ազդեցություն են ունենում նաև մյուս տնտեսական շրջանները և արտասահմանյան երկրները։ Այդ պատճառով էլ այսօր պահանջարկը շատ է առաջ անցել առաջարկից, արտադրությունը չի բավարարում բնակչության սպառնակ պահանջարկը արտադրանքի շատ տեսակների գծով։ ՍՄԿԿ-ն խնդիր է դնում հասարակական արտադրության դինամիկ զարգացմամբ, արտադրվող արդյունքների տեսականու մշտական նորացմամբ ու որակի բարձրացմամբ կարողանալ բավարարել սովետական սպառողի օրավուր աճող պահանջարկը։

ՀՍՍՀ-ում մեծ զարգացում է ապրել կոմունալ կենցաղային ծառայությունների բնագավառը։ Դա պայմանավորված է աննախընթաց տեմպերով իրականացվող բնակարանային շինարարությամբ, որն ընդգրկել է ոչ միայն մեծ քաղաքները, այլև փոքր քաղաքներն ու գյուղական վայրերը։ Մինչդեռ, ինչպես հայտնի է, Սովետական Հայաստանը անցյալից բնակարանային ֆոնդ գրեթե չժառանգեց։ Բնակչությունը հիմնականում ապրում էր կավաշեն տներում, գյուղական հյուղակներում։ 1926 թ. քաղաքների ու քաղաքատիպ ավանների հանրայնացված օգտակար բնակելի ֆոնդը կազմում էր միայն 260 հազ. քմ։ Հանրապետությունում 1921-1985 թթ. շահագործման է հանձնվել 40418 հազար քմ օգտակար բնակելի տարածություն։ Ընդ որում, դրա 58,3 %-ը կառուցել են պետությունը, կոոպերատիվ ձեռնարկություններն ու կազմակերպությունները, բնակկոոպերացիան, մոտ 40,9 %-ը՝ բնակչությունն իր միջոցներով, պետական վարկի օգնությամբ։

Նոր գեղատեսիլ քաղաքների ստեղծման ու զարգացման հետ միասին, կարծես մեկեն, փոխվեց հայկական գյուղը։ Հատկապես հետպատերազմյան տարիներին կոլտնտեսականներն ու գյուղական ինտելիգենցիան սեփական միջոցներով ու պետական վարկի օգնությամբ կառուցեցին ժամանակակից բարեկարգ, գեղեցիկ, քարաշեն տներ։

1921-1985 թթ. կոլտնտեսականների և գյուղական ինտելիգենցիայի միջոցներով կառուցվել է 8926 հազ. քմ տարածության բնակարան։ Դրա հետ մեկտեղ, եթե նկատի առնվի սովետական անտեսությունների բնակարանային շինարարությունը, որ իրականացվել է պետական և բանվոր-ծառայողների սեփական միջոցներով (7387 հազ. քմ), ապա ակնհայտ կդառնան գյուղական վայրերում բնակարանային շինարարության վիթխարի մասշտաբները։ Գյուղական վայրերում տարեցտարի ավելանում է գազիֆիկացված բնակարանների թիվը։ 1985 թ. արդեն գազիֆիկացվել էր 859 բնակավայր (որից 808 գյուղ)։

Այդուհանդերձ, մի կողմից հանրապետությունում քաղաքային բնակչության աճի խիստ բարձր թափի, մյուս կողմից՝ բնակարանային շինարարության պլանների խրոնիկական թերակատարումների պատճառով բնակարանային պրոբլեմը վերջնականապես լուծված չէ։ Շատերը դեռևս ապրում են ոչ հարմարավետ բնակարաններում, կամ բնակարանի խիստ կարիքի մեջ ենք։ Բավական է ասել, որ մեր երկրում ոչ մի հանրապետություն չի բնութագրվում քաղաքային բնակչության աճի այդպիսի թափով, ինչպիսին եղել է Սովետական Հայաստանում։ Քաղաքային բնակչության տեսակարար կշռով Հայկական ՍՍՀ-ն Միությունում չորրորդ հանրապետությունն է և զիջում է միայն Ռուսաստանյան ֆեդերացիային, Լատվիական ու Էստոնական հանրապետություններին։ ՍՄԿԿ XXVII համագումարը խնդիր է դրել բարելավել մարդկանց բնակարանային պայմաններն այն հաշվով, որ մինչև 2000 թ. փաստորեն սովետական ամեն մի ընտանիք ունենա առանձին տուն, բնակարան կամ անհատական տուն։

Սովետական Հայաստանի 1921-1985 թթ. մոտ հնգապատկված բնակչության 68 %-ն ապրում է քաղաքներում։ Արմատապես փոխվել են բնակչության սոցիալական կազմը, զբաղմունքի բնույթը, կենցաղն ու ապրելակերպը։ 1985 թ. հանրապետությունում աշխատում էին ավելի քան մեկ միլիոն 450 հազար բանվորներ, ծառայողներ ու կոլտնտեսականներ, որոնց հայրենանվեր աշխատանքով բազմապատկվել է սոցիալիստական սեփականությունը, ծաղկում են գիտությունն ու կուլտուրան։

Սովետական Հայաստանը դարձել է գիտության ու լուսավորության երկիր։ Նրա գիտնականներն այսօր իրենց ավանդն են ներդնում համաշխարհային գիտության զարգացման մի շարք ուղղություններում։

Ինչպես մեր մեծ Միության մյուս հանրապետությունների, այնպես էլ Սովետական Հայաստանի օրինակը համոզիչ վկայությունն է այն բանի, որ միայն ժողովուրդների դաշինքն է ունակ իրական պայմաններ ստեղծելու ազգային վերածննդի ու արմատական սոցիալական վերափոխումների համար։

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ АРМЯНСКОЙ ССР В ПРЕДДВЕРИИ 70-ЛЕТИЯ ВЕЛИКОГО ОКТЯБРЯ

ВЛАДИМИР ХОДЖАБЕКЯН

Член-корр.АН АрмССР

Резюме

С победой Великой Октябрьской социалистической революции и установлением в Армении Советской власти началась эпоха социального и национального возрождения армянского народа, коренных социально-экономических преобразований. Советская Армения превратилась из аграрной в индустриальную республику. Особое развитие в Армении претерпела промышленность, в летописи которой выделяется послевоенный

период. Всестороннее развитие республики сопровождалось прогрессивными изменениями в отраслевой структуре. Особенно быстрыми темпами развивались машиностроение, энергетика, цветная металлургия, а также промышленность стройматериалов. Промышленность Армении по темпам роста в 1941—1985 гг. более чем в 2,4 раза превосходила соответствующие показатели промышленности СССР. В промышленности АрмССР создана такая отраслевая структура, которая характерна для промышленно развитых стран. Коренным образом изменилось индустриальное лицо республики. Основаны новые города, поселки и села, выросли и стали красивее старые, были построены многочисленные промышленные предприятия, электростанции, транспортные магистрали и узлы связи, новые здания высших и средних специальных учебных заведений, школы, здравницы, больницы, поликлиники, ясли, детские сады, жилые дома, множество объектов торговли, быта и обслуживания населения. Советская Армения превратилась в страну науки и просвещения.

Реализация постановлений XXVII съезда КПСС, январского и июньского Пленумов ЦК КПСС 1987 г. обеспечит интенсивное и динамичное развитие республики, преодоление односторонности в развитии промышленности, имевшей место в последние годы, позволит обратить серьезное внимание на улучшение размещения производительных сил, чистоту воздуха и окружающей среды, на градостроительство, социально-культурные потребности населения.